ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Տիգրան Գրիգորյան, մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024թ. փետրվարի 12-ից 16-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մրցունակություն, աճ և ճգնաժամ» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են մրցունակության հասկացությունը, բարձր մրցունակության անհրաժեշտ պայմանները, մրցունակության գնահատման գործիքակազմը և մրցունակության բարձրացման քաղաքականության հնարավոր ուղղությունները: Դասընթացն ամփոփվել է ճգնաժամային իրավիճակներում տնտեսական աճի գնահատման այլընտրանքային մոտեցումների քննարկմամբ: Դասընթացն ուղեկցվել է գործնական պարապմունքներով, որտեղ մասնակիցներն առանձին խմբերով վերլուծել են միավոր աշխատուժի ծախսը, վերջինիս հիման վրա գնահատել տարբեր երկրների մրցունակությունները և իրականացրել վերջիններիս համեմատություն և շնորհանդեսի տեսքով ներկայացրել լսարանին: Դասընթացը ներառել է նաև մասնակից երկրների մրցունակությանը վերաբերող շնորհանդեսների ներկայացումների բաղադրիչ: ՀՀ մասով ներկայացվել են արդյունաբերական քաղաքականության առանձնահատկությունների և ՀՀ-ում թվայնացման գործընթացի վերաբերյալ շնորհանդեսներ:

Ընդհանուր առմամբ, դասընթացն ուներ հստակ ուղղվածություն և հիմնականում ընդգրկում էր տնտեսության մրցունակության գնահատման և բարձրացման քաղաքականության գործնական հիմնահարցերը:

5. Քննարկված թեմաները՝

1. 2030թ. կայուն զարգացման օրակարգի ձեռքբերումների գնահատում
2. Տարածքային մարտահրավերներ և լուծումներ կանաչ և թվային անցման լույսի ներքո
3. Ոչ գնային մրցունակություն
4. Աճի խթանում, արտադրողականության բարելավում
5. Մրցունակությունը Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայում
6. Առևտրային քաղաքականություն և մրցունակություն

7. Մրցակցությունը համաշխարհային արժեշղթաներում
8. Գլոբալիզացիայի ապագան և դրա հետևանքները Արևելյան Եվրոպայի համար
9. Խելացի, առաքելությանը կողմնորոշված, ռազմավարական. արդյունաբերական քաղաքականության նոր մոտեցումները
10. Համաշխարհային ներդրումներ և քաղաքական ռիսկ
11. Ուկրաինայի տնտեսական վերականգնման ժողովրդագրական մարտահրավերները
12. Ուկրաինայում պատերազմի տնտեսական հետևանքների գնահատումը արբանյակային տվյալների միջոցով

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, պատրաստվել շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Միաժամանակ շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

19 փետրվար, 2024թ.